ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Կապի և տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ: Հանդիպմանը ներկա էր նաև Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը:

Ողջունելով Ռումինիայի նախագահին համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները ջերմ և բարեկամական սերտ զարգացում են ապրում. «*Մա շարունակականությունն է այն ջերմ կապերի, որ առկա են եղել մեր ժողովուրդների միջև դարեր ի վեր՝ վաղ միջնադարից սկսած: Եվ մեզ համար ուրախալի է, որ հայ համայնքն այնտեղ շատ աշխույժ կյանքով է ապրում, և ռումինաբնակ հայորդիներն իրենց նվիրյալ ծառայությամբ կարևոր ներդրում են ունենում Ռումինիո կյանքից ներս*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում՝ վերհիշելով նաև Ռումինիայում ծնված և քաղաքացիություն ստացած Ամենայն Հայոց 130-րդ Հայրապետ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի գահակալության տարիները և լուսահոգի Հայրապետի դերը Մայր Աթոռի բարեկարգման գործում:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նաև Եվրոպական Միության ընդլայնման և առաջիկա տարում Ռումինիայի՝ ԵՄ-ին անդամակցելու կապակցությամբ: Նորին Սրբությունն իր եղբայրական սիրո ողջույնը հղեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Թեոկտիստ Պատրիարքին:

Իր հերթին Ռումինիայի նախագահը, ուրախություն հայտնելով Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր կենտրոն այցի առիթով, իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ իր հարգանքը հայտնելով Հայ Եկեղեցուն և Հայոց Հովվապետին: Նախագահ Բասեսկուն կարևորեց հոգևոր արժեքների, կրոնների, ինչպես նաև միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունների դերը մարդկության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման գործում:

Ռումինիայի նախագահն իր խոսքում նշեց, որ մեծ հարգանք է տածում հայ ժողովրդի պատմության նկատմամբ, և ընդգծեց, որ Հայաստանը, որպես քրիստոնյա պետություն, իր տեղն ունի եվրոպական քրիստոնյա պետությունների կողքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՏՈՒՆԸ ԱՌԱՔԵԼՈՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԼԽԻՒՐՈՅՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԻՆԱՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՂԻԱԶԱՐԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԼԽԻՒՐՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԻՆԱՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒՄԸ «ՏԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ԵՎԵՄՈՆԻՍԻ» ՌՈՒՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԵՐԳԵՅ ՄԱԼՅԱՎԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ